Քրիստոնյա Հայաստան

2017, ՄԱՅԻՍ Բ, ԹԻՎ 10 (486)

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

25 մայիսի

Վիեննայի պետական համալսարանի դասախոսներին եւ ուսանողներին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Քրիստոնեությունը Կովկասում. սուրբ Հռիփսիմեի եւ սուրբ Նունեի հետքերով» ծրագրի շրջանակներում Հայաստան ժամանած Վիեննայի պետական համալսարանի թվով 32 դասախոսի եւ ուսանողի՝ Կաթոլիկ աստվածաբնության ֆակուլտետի ծիսագիտության եւ խորհուրդների աստվածաբանության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Հ. Յ. Ֆոյլների ու քրիստոնյա Արեւելքի ուսումնասիրության եւ հայրաբանության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռուդոլֆ Պրոկշիի առաջնորդությամբ: Խմբին ուղեկցում էր նույն համալսարանի աստվածաբանության ֆակուլտետի ուսանող, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Հուսիկ աբղ. Սմբատյանը:

Նորին Սրբությունը, ողջունելով հյուրերին, գոհունակություն արտահայտեց, որ համալսարանն ուսանողներին հնարավորություն է ընձեռում իրենց դասախոսների ուղեկցությամբ այցելելու քրիստոնեական մշակույթ ունեցող երկրներ եւ հաղորդ դառնալու դրանց հոգեւոր արժեքներին ու ժառանգությանը: Վեհափառ Հայրապետը նաեւ շնորհակալություն հայտնեց պրոֆեսոր Ֆոյլներին՝ Մայր Աթոռի եւ համալսարանի միջեւ հաստատված սերտ կապերի առնչությամբ, որոնց շնորհիվ Մայր Աթոռի միաբաններն իրենց բարձրագույն կրթությունը շարունակում են Վիեննայի նշանավոր կրթական հաստատությունում:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսը պատասխանեց համալսարանականների հարցերին, որոնք վերաբերում էին Եկեղեցու կողմից Հայոց ցեղասպանությունից հետո եւ խորհրդային տարիներին դիմագրաված դժվարություններին, արդի մարտահրավերների հաղթահարմանը, հոգեւորականների պատրաստությանը եւ Հայոց Եկեղեցու հարաբերություններին քույր Եկեղեցիների հետ:

Հանդիպման վերջում Նորին Սրբությունը, իր օրհնությունը բերելով ներկաներին, Աստծու ամենազոր Աջի պահպանությունը մաղթեց դասախոսներին եւ ուսանողներին՝ համալսարանական իրենց ծրագրի իրականացման համար:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը:

«Ավրորա» մրցանակաբաշխությանը մասնակցող հյուրերին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Ավրորա» մարդասիրական մրցանակաբաշխությանը մասնակից հյուրերին, որոնց թվում՝ 2016 թ. մրցանակակիր Մարգարիտ Բարանկիցեին եւ 2017 թ. մրցանակի հավակնորդ, վիրաբույժ Թոմ Քատինային՝ ուղեկցությամբ «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության համահիմնադիր, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ Ռուբեն Վարդանյանի:

Շնորհակալություն հայտնելով նախաձեռնության նկատմամբ Նորին Սրբության կողմից ցուցաբերվող մշտական ուշադրության համար՝ պրն Ռուբեն Վարդանյանն ընդգծեց, որ Հայոց Եկեղեցին դարերի ընթացքում հայ ժողովրդին ավանդել է բարձր արժեքներ, դիմացինին օգնելու ուժ եւ հավատ, առանց որոնց ոչինչ հնարավոր չէ կյանքի կոչել: «Այսօր, երբ աշխարհում կարծես աճել է անտարբերությունը, հուսով ենք, որ մեր շարժումը մարդկանց ինչ-որ բան փոխելու ուժ եւ վստահություն կհաղորդի»,- նշեց նա:

Իր հերթին 2016 թ. մրցանակի առաջին դափնեկիր Մարգարիտ Բարանկիցեն, ներկայացնելով իր ապրումները, ասաց, որ անցած տարվանից՝ «Ավրորա» մրցանակաբաշխությունից ի վեր, հասկացել է, որ սերը կարող է հաղթանակել ամենուրեք: «Այս մրցանակաբաշխության արդյունքում հայ ժողովրդի սերը տարածվեց՝ օգնություն հասցնելով Բրազիլիայի, Կոնգոյի, Բուրունդիի եւ Եթովպիայի երեխաներին: Հայ ժողովուրդն էլ դժվարին պահեր է ունեցել, բայց այսօր կանգուն է՝ շնորհիվ իր նվիրյալ զավակների: Մենք խոստանում ենք անցնել նրանց ճանապարհով եւ շնորհակալ ենք՝ մեզ այդ հնարավորությունն ընձեռելու համար»,- նշեց տիկ. Բարանկիցեն:

Ներկաներին իր օրհնությունը բերեց նաեւ Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսը: Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց մարդասիրական նախաձեռնության կազմակերպիչներին՝ հաստատելով, որ մրցանակաբաշխությունը, բացահայտելով, քաջալերելով նվիրյալ անձանց, նաեւ մարդասիրության յուրատեսակ քարոզչություն է՝ հետեւելու նրանց օրինակին, ովքեր իրենց կյանքը նվիրել են կարիքի ու տառապանքի մեջ գտնվող մարդկանց աջակցելուն, նրանց կյանքի մեջ հույս եւ լույս բերելուն:

Նորին Սրբությունն ընդգծեց նաեւ, որ այս նախաձեռնությունը հայ ժողովրդի երախտագիտության զգացումի արտահայտումն է աշխարհին, այն բոլոր բարեսեր անձանց, ովքեր հայոց կյանքի ողբերգական պահին հայ ժողովրդի կողքին են եղել, աջակցել ու փրկել նրա

զավակներին: *«Լինելով ցեղասպանությունը վերապրած ժողովուրդ՝ մենք կարեւորում ենք այս մրցանակաբաշխության հաստատումը՝ այսօր սրտակից լինելու այն ազգերին ու ժողովուրդներին, ովքեր ցավի ու տառապանքի կրողներ են: Շնորհիվ իր սիրո եւ հավատքի՝ մեր ժողովուրդը կարողացավ հաղթահարել բոլոր դժվարությունները եւ վերագտնել իր կյանքը: Եվ մեր պատմությունը կարող է հույսի աղբյուր լինել բոլոր այն ազգերի համար, ովքեր տառապանքի, մահվան ճանապարհին են անցնում այսօր»*,- ընդգծեց Հայոց Հայրապետը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ իր օրհնությունը բերեց եւ շնորհակալություն հայտնեց տիկ. Մարգարիտ Բարանկիցեին եւ պրն Թոմ Քատինային՝ նրանց մարդասիրական գործունեության համար՝ նշելով, որ դիմացինին օգտակար լինելու ծառայության մեջ մեծ երանություն ու երջանկություն կա: *«Դուք Աստծու ձեռքերն եք, որ բարիք եք գործում՝ կյանքի կոչելով տերունապարգեւ պատգամներն ու պատվիրանները: Ձեզ նման մարդասեր անձանց նվիրյալ, անձնազոհ ծառայության շնորհիվ է, որ պիտի փոխվի աշխարհը, սերն ու բարությունն առատանան մարդկային կյանքում, եւ այն զերծ մնա տառապանքից ու ողբերգություններից, որոնց այսօր էլ ականատես ենք»*,- ասաց Գարեգին Բ Կաթողիկոսը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց, որ Աստված օրհնի, զորացնի նրանց իրենց աստվածահաճո առաքելության մեջ եւ նման մարդասեր նվիրյալներով համալրի նրանց շարքերը:

Պատվիրակությունը Մայր տաճարում մասնակցեց նաեւ Տեր Հիսուս Քրիստոսի համբարձման տոնի առիթով մատուցված Պատարագին:

28 մայիսի

Հունաստանի Ալեքսանդրուպոլի միտրոպոլիտին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Ավրորա» մրցանակաբաշխության առիթով Հայաստան ժամանած Հունաստանի Ալեքսանդրուպոլի միտրոպոլիտ Անթիմոս Կուկուրիդեսին եւ առաջնորդարանի դիվանապետ Իրենեոս վրդ. Լավցիսին՝ ուղեկցությամբ Հունաստանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Խորեն վրդ. Առաքելյանի:

Նորին Սրբությունը, ուրախություն հայտնելով Հույն Ուղղափառ Եկեղեցու բարձրաստիճան հոգեւորականների այցի առիթով, կարեւորեց դարերի ընթացքում հայ եւ հույն ժողովուրդների, ինչպես նաեւ երկու Եկեղեցիների միջեւ ձեւավորված ջերմ փոխհարաբերություններն ու սերտ գործակցությունը:

Ալեքսանդրուպոլի միտրոպոլիտն Ամենայն Հայոց Կաթողիկոսին փոխանցեց Հունաստանի Հերոնիմոս Բ Արքեպիսկոպոսի ջերմ ողջույնները: Անթիմոս միտրոպոլիտն իր խոսքում ուրախությամբ ընդգծեց, որ հունահայ համայնքն իր ակտիվ գործունեությամբ կարեւոր ներդրում ունի Հունաստանի զարգացման ու բարգավաճման գործում: Վերջինս նաեւ խոսեց հայ եւ հույն ժողովուրդների պատմության ծանր ժամանակաշրջանների մասին՝ գոհունակությամբ արձանագրելով, որ հակառակ բոլոր փորձությունների՝ այսօր երկու ժողովուրդները շարունակում են կերտել իրենց խաղաղ ու բարօր կյանքը:

Հանդիպման վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իր օրնությունն ու բարեմաղթանքները բերելով հոգեւոր այրերին, նաեւ եղբայրական ողջույններ փոխանցեց Հունաստանի Արքեպիսկոպոսին: Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Շահե Ծ. վրդ. Անանյանը եւ Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդ Իսահակ վրդ. Պողոսյանը:

Տես նաեւ՝ էջ 2

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Վատիկանի Գաղտնի արխիվների եւ Առաքելական գրադարանի ղեկավարին

30 մայիսի

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Վատիկանի Գաղտնի արխիվների եւ Առաքելական գրադարանի ղեկավար Մոնս. Ժան-Լուի Բրյուգեսի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ Վատիկանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Միքայել Մինասյանի:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունն ու գնահատանքը բերեց պատվիրակության անդամներին այցի առիթով եւ անդրադարձ կատարեց Կաթոլիկ Եկեղեցու հետ Հայոց Եկեղեցու ունեցած ջերմ կապերին եւ գործակցությանը՝ դրա վառ վկայություն նկատելով Կաթոլիկ Եկեղեցու քահանայապետեր Յովհաննես Պողոս Բ եւ Ֆրանցիսկոս Ա Պապերի այցերը Հայաստան եւ Ս. Էջմիածին:

Վեհափառ Հայրապետը գոհունակություն հայտնեց նաեւ Վատիկանի Գաղտնի արխիվների եւ Առաքելական գրադարանի կողմից Հայոց ցեղասպանության վերաբերյալ արժեքավոր փաստաթղթերի ցուցադրման, հրապարակման եւ դրանք ուսումնասիրության համար գիտնականներին տրամադրելու կապակցությամբ՝ ընդգծելով, որ դա կարեւոր ներդրում է Վատիկանի կողմից՝ Մեծ եղեռնի համընդհանուր ճանաչման եւ դատապարտման գործում: Այս կապակցությամբ Նորին Սրբությունն իր մասնավոր գնահատանքը հայտնեց պատվիրակության կազմում ընդգրկված Ռոմի Քահանայապետական արեւելագիտության ինստիտուտի եկեղեցական իրավունքի ֆակուլտետի պրոֆեսոր Հայր Ժորժ Անրի Ռույսենին, ում ջանքերով հրապարակվել է Հայոց ցեղասպանությանն առնչվող պատմական փաստաթղթերի բազմահատոր աշխատությունը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը խոսեց նաեւ երկու Եկեղեցիների միջեւ ձեւավորված գործակցության շրջանակներում Կաթոլիկ Եկեղեցու բարձրագույն ուսումնական հաստատություններում Մայր Աթոռի միաբանների ուսումնառության մասին:

Իր հերթին Մոնս. Ժան-Լուի Բրյուգեսն իր ուրախությունն արտահայտեց Հայաստան այցի առիթով՝ ընդգծելով, որ դեռեւս Ֆրանսիայում իր ծառայության շրջանից բազում առիթներ է ունեցել ճանաչելու հայ ժողովրդին եւ ծանոթանալու նրա պատմությանն ու մշակույթին:

Շրջայցի ընթացքում անդրադարձ կատարվեց Մայր Աթոռի հոգեւոր կրթադաստիարակչական առաքելությանը եւ հոգեւորականների պատրաստությանը:

Վերջում Ամենայն Հայոց Հայրապետն իր եղբայրական ջերմ ողջույնները փոխանցեց Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապին՝ մաղթելով, որ Աստված միշտ գորեղ պահի Կաթոլիկ Եկեղեցին, նրա սպասավորներին եւ հավատացյալներին:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Յովհաննիսյանը, միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Շահե վրդ. Ալանյանը եւ Արխիվի ու թանգարանների տնօրեն Ասողիկ քհն. Կարապետյանը:

Նույն օրը Մոնս. Ժան-Լուի Բրյուգեսը Գեւորգյան հոգեւոր ճեմարանում հանդես եկավ «Հայկական գանձերը Վատիկանի Գաղտնի արխիվներում եւ Առաքելական գրադարանում» թեմայով դասախոսությամբ:

Գեւորգյան հոգեւոր ճեմարանի կայքէջի եւ «Էջմիածին» երգչախմբի նոր տեսասկավառակի շնորհանդեսը

Մայիսի 15-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների սրահում տեղի ունեցավ ճեմարանի պաշտոնական կայքէջի (gevorgianseminary.am) եւ ճեմարանի «Էջմիածին» երգչախմբի «Արեւագալ» տեսասկավառակի շնորհանդեսը: Կայքէջն ստեղծվել է Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան «Կլոր սեղան» միջեկեղեցական բարեգործական հիմնադրամի աջակցությամբ:

Միջոցառումն սկսվեց ճեմարանի տեսուչ Գարեգին վրդ. Համբարձումյանի ողջույնի խոսքով:

Այնուհետեւ ճեմարանի վերակացու Գեղարդ աբդ. Յովհաննիսյանն ընթերցեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության գիրը. *«Գոհունակությամբ ենք անդրադառնում, որ մեր Սուրբ Եկեղեցու գործունեության մեջ այսօր գործածվում են արդի տեխնոլոգիական ձեռքբերումները՝ առավել արդյունավորելու հոգեւոր քարոզչության առաքելությունը քրիստոսասեր մեր ժողովրդի կյանքում: Գեւորգյան հոգեւոր ճեմարանի կայքէջը հերթական գովարժան իրագործումն է այս ուղղությամբ, որ նաեւ մեծ հնարավորություն է ստեղծելու կրթօջախի դասախոսական կազմի ու սաների համար՝ լայն շրջանակներին ներկայացնելու իրենց ստեղծագործական աշխատանքի արդյունքները: Մեր գնահատանքն ենք բերում կայքէջի ստեղծման գործում ջանքեր ներդրած բոլոր անձանց եւ աղոթքով առ Աստված հայցում Բարձրյալի խնամքն ու գորակցությունը: Թող Տիրոջ օրհնության ներքո կայքէջի գործունեությունն արգասավորվի եկեղեցաշեն բարգում ձեռքբերումներով՝ ի պայծառություն Առաքելական մեր Ս. Եկեղեցու եւ ի բարօրություն հավատավոր մեր ժողովրդի»*:

Այնուհետեւ «Էջմիածին» երգչախմբի ստեղծման, գործունեության եւ «Արեւագալ» տեսասկավառակի թողարկման մասին մանրամասն տեղեկություններ հաղորդեց երգչախմբի ղեկավար եւ հիմնադիր Արթուր սրկ. Վարդանյանը:

Միջոցառման ընթացքում ասմունքով եւ հոգեւոր-ազգային երգերի կատարումներով հանդես եկան ճեմարանի ասմունքի լսարանի եւ «Էջմիածին» երգչախմբի սաները:

Արարողությանը ներկա էին ճեմարանի սաներ, դասախոսներ, Մայր Աթոռի միաբաններ եւ հյուրեր:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՄԵՐԿՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքներն ենք բերում հայրենաբնակ եւ աշխարհասփյուռ մեր ժողովրդին՝ Հանրապետության օրվա առիթով:

Այսօր տոնախմբում ենք Հայաստանի առաջին Հանրապետության հռչակման 99-րդ տարեդարձը, հարգանքի տուրք ենք մատուցում մայիսյան որոշիչ գոյամարտերին իրենց մասնակցությունը բերած եւ հաղթանակի հասած մեր ազգի հերոս զավակներին եւ ոգեկոչում նրանց անմահ հիշատակը: Այս տոնակատարությունները մեզ հիշեցնում են հայկական զորամիավորումների եւ մարտի դաշտ դուրս եկած ժողովրդի հերոսական ոգին, հայրենիքը պաշտպանելու միասնական կամքը: Գեւորգ Ե Հայրապետի վեհապանծ եւ ոգեւորիչ խոսքով քաջալերված եւ հաղթանակի անսպառ հույսը շաղախած Սուրբ Էջմիածնի աստվածակնիք զանգերի թնդյուններին՝ հայ զորականները, հոգեւորականներն ու աշխարհականները իրենց պայքարը պսակեցին հաղթանակներով, որոնց պտուղը եղավ առաջին Հանրապետության հռչակումը:

Սիրելինե՛ր, մենք ժառանգորդներն ենք այդ հաղթական ճակատամարտերին մասնակից հերոսների, ներկայիս Հանրապետությունը ժառանգությունն է այդ քաջ մարտիկների հայրենանվեր գործերի: Այս ամենը մեզ մղում է անցյալի փորձառությամբ պարտավորեցնող միասնականության, նախանձախնդրության ու նվիրումի՝ զորացնելու ու շենացնելու մեր երկիրը եւ կերտելու խաղաղ կյանքը մեր ժողովրդի:

Աղոթում ենք, որ Ամենազոր Տերն Իր Սուրբ Աջի հովանու ներքո անսասան պահի մեր պետականությունը, պահպանի աշխարհասփյուռ ազգս հայոց՝ արդյունավորելով ի սեր հայրենյաց մեր բոլոր ջանքերը:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Երկրորդ Ծաղկազարդի տոնը եւ Հանրապետության օրվա ոգեկոչումը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Մայիսի 28-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց Երկրորդ Ծաղկազարդի տոնը, որն այս տարի համընկել էր նաեւ Հանրապետության օրվա հետ:

Միածնաէջ Մայր տաճարում, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց սուրբ եւ անմահ Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի եկեղեցական ժողովական կառույցների տնօրեն Զաքարիա Ծ. վրդ. Բաղուդյանը:

Հայր սուրբն իր քարոզում մասնավորապես անդրադարձավ Հայաստանի առաջին Հանրապետության ստեղծմանը եւ պետականության կարեւորությանը հայ ժողովրդի կյանքում՝ ընդգծելով նաեւ Հայոց Եկեղեցու մեծ դերակատարությունը մայիսյան հերոսամարտերում:

«Անկախ պետություն եւ պետականություն ունենալը մեր հայրերի դարավոր երազանքն է եղել, որի համար նրանք պայքարել են եւ համառ ջանքեր գործադրել: Փառք Աստծո, այսօր ունենք Հայաստանի երրորդ Հանրապետությունը, որը թեպետ բազում խնդիրների եւ մարտահրավերների առաջ է կանգնած, բայց այն մերն է, մեր սրբազան Հայրենիքը: Այն առավել սիրո, գուրգուրանքի եւ խնամքի կարիք ունի:

Չպետք է մոռանալ, որ Հայոց աշխարհը սրբացված է՝ մեր սուրբ նահատակների արյամբ, եւ զորացած՝ իր քաջարի զավակներով: Մենք այլ Հայրենիք չունենք եւ օտար երկրների փոխարեն մեր Հայրենիքի շենացմանը պետք է լծվենք: Մեր մտավոր ամբողջ ուժը, տաղանդը եւ տարբեր ձիրքերը պետք է ի սպաս դնենք մեր Հայրենիքի զորացման եւ բարգավաճման համար: Հայրենիքի հզորությունը կախված է մեզանից յուրաքանչյուրից, մեր անդուլ եւ նախանձախնդիր աշխատանքից, Հայրենիքի հանդեպ անմնացորդ սիրուց եւ նվիրումից... Ուստի այսօր առավել քան երբեւէ կարիքն ունենք զգոնության եւ համախմբման, քանզի Սարդարապատը չի սահմանափակվում օրով կամ թվականով: Այն շարունակվող հերոսամարտ է, պայքարի եւ լինելիության ոգի, քանզի իբրեւ ազգ՝ դատապարտված ենք հաղթանակած դուրս գալու տեսանելի եւ անտեսանելի բոլոր պատերազմներից»,- նշեց հայր Զաքարիան:

Քարոզի վերջում պատարագիչ հայր սուրբը կոչ արեց լինել համախմբված եւ միաբան՝ հարատեւորեն աղոթք բարձրացնելով առ Աստված՝ հայրենիքի ամրության, բարօրության եւ խաղաղ կյանքի համար:

Սուրբ Պատարագի ավարտին, նախագահությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Գոհաբանական մաղթանք, որի ընթացքում հոգեւորականները ներկա ժողովրդի հետ միասին աղոթեցին Հայաստանի Հանրապետության անսասանության, զորացման ու շենացման համար:

Գերագույն հոգեւոր խորհրդի հերթական ժողովը Մոսկվայում

Օրհնությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ հրավերով Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի առաջնորդ Եզրաս արք. Ներսիսյանի, թեմի հիմնադրման 300-ամյակի առիթով, մայիսի 15-ին Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Գերագույն հոգեւոր ժողովի անդամների հետ մեկնեց Մոսկվա:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորած պատվիրակությանը «Շերեմետեւո» օդանավակայանում դիմավորեցին թեմակալ առաջնորդ Եզրաս արքեպիսկոպոսը եւ Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Վարդան Տողանյանը, թեմական կառույցների եւ հայ համայնքի ներկայացուցիչներ:

Ապա հայրապետական շքախումբն ուղղվեց դեպի Մոսկվայի հայկական առաջնորդանիստ եկեղեցական համալիր, ուր Գերագույն հոգեւոր խորհրդի անդամների եւ թեմի հոգեւոր դասի ներկայացուցիչների ուղեկցությամբ՝ Գարեգին Բ Հայրապետն այցելեց Սուրբ Պայծառակերպություն տաճար:

Նույն օրը Ամենայն Հայոց Կաթողիկոսը ներկա գտնվեց համալիրի տարածքի «Տապան» թանգարանում թեմի հիմնադրման 300-ամյակին նվիրված հայ անվանի նկարիչների ստեղծագործությունների ցուցահանդեսի բացման արարողությանը: Ցուցահանդեսում ներկայացված էին տարբեր բարերար հայորդիների կողմից թեմին նվիրաբերված հայ անվանի նկարիչների 23 կտավ եւ 4 քանդակ:

Ցուցահանդեսի բացմանը ներկա էին Գերագույն հոգեւոր խորհրդի անդամները, թեմի հոգեւոր սպասավորներ, ՌԴ-ում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպանը, մտավորականներ

եւ Մոսկվայի հայ համայնքի ներկայացուցիչներ, ինչպես նաեւ Կայսերական ուղղափառ պաղեստինյան ընկերության նախագահ Սերգեյ Ստեպաշինը, հասարակական գործիչ պրոֆ. Լեոնիդ Ռոշալը, Պատմության պետական թանգարանի տնօրեն Ալեքսեյ Լեւիկինը եւ ռուս արվեստագետներ:

Արարողությունն սկսվեց Եզրաս արք. Ներսիսյանի ողջույնի խոսքով: Սրբազանն իր ուրախությունը հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի Մոսկվա այցելության առիթով, որը զուգադիպել էր թեմի համար հոբելյանական տարուն: Անդրադառնալով կազմակերպված ցուցահանդեսին՝ Եզրաս սրբազանը շնորհակալություն հայտնեց բոլոր այն անձանց, որոնք շարունակ իրենց ներդրումն են բերում հայոց ազգային-հոգեւոր կյանքի շենացման գործին, ինչպես նաեւ նրանց, որոնք մշտապես աջակցում են հայ ժողովրդին եւ Հայաստանին:

Այնուհետեւ իր օրհնությունը ներկաներին բերեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետը:

«Գոհություն եւ փառք ենք մատուցում առ Աստված, որ ռուսաստանաբնակ Մեր զավակները, Առաքելական մեր Ս. Եկեղեցու հոգածու առաջնորդությամբ, ամուր են պահում իրենց հավատարմությունը մեր արժեքներին, մեր հայրերի սուրբ ու նվիրական ավանդներին: Բարձրյալի օրհնությամբ տիրախնամ թեմը արդյունավորապես ընդլայնում է իր գործունեության շրջանակները, հոգեւոր քարոզչական առաքելության հետ մեկտեղ սպասավորում հայ մշակույթի զարգացմանը, մեր մատաղ սերնդի հայեցի կրթությանն ու դաստիարակությանը, հայորդյաց ազգային ու հոգեւոր ինքնության զորացմանը:

Ուրախ ենք այսօր Գերագույն հոգեւոր խորհրդի անդամների հետ առաջին անգամ լինելու Մոսկվայի առաջնորդանիստ եկեղեցական համալիրի «Տապան» թանգարանում եւ ծանոթանալու ներկայացված հոգեւոր-մշակութային արժեքավոր ցուցանմուշներին՝ մեր անցյալից ժառանգված սրբազան մասունքներին, որոնցից յուրաքանչյուրը առանձին մի պատմություն է մեր ժողովրդի ստեղծարար ոգու, լուսավոր հավատքի ու աստվածսիրության, մշակույթի, գիտության ու կրթության հանդեպ անսպառ նվիրումի ու նախանձախնդրության մասին: Թանգարանն իր կարճատեւ գործունեության ընթացքում դարձել է մշակութային կարեւոր օջախ ռուսահայոց կյանքում, որն իր առաքելությամբ նպաստում է բարեպաշտ հայորդիների հոգիներում զորեղ պահելու ազգային գիտակցությունը, կապվածությունը մեր մշակույթին, մեր նվիրական արմատներին:

Այսօր, սիրելինե՛ր, ի տես հայ եւ օտարազգի այցելուների՝ թանգարանում ներկայացվում են հայ գեղանկարչության բարձրարժեք գործեր՝ Հովհաննես Այվազովսկու, Մարտիրոս Սարյանի, Եղիշե Թադեւոսյանի, Գեւորգ Բաշինջաղյանի, Մինաս Ավետիսյանի եւ մեր այլ մեծերի վրձնած ստեղծագործությունները, որոնք տարբեր ժամանակահատվածներում բարերար հայորդիների կողմից ընծայաբերվել են Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմին»,- ասաց Վեհափառ Հայրապետը՝ իր օրհնությունն ու բարձր գնահատանքը բերելով Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի բարեջան առաջնորդ Եզրաս արք. Ներսիսյանին, թեմական խորհրդի անդամներին, կտավների եւ քանդակների պատվարժան նվիրատուներին եւ «Տապան» թանգարանի աշխատակիցներին:

Նորին Սրբությունը մաղթեց, որ Բարձրյալն Աստված առատապես օրհնի ու շնորհազարդի ամենքին՝ պարգեւելով ազգանվեր ու եկեղեցաշեն գործունեության նորանոր հաջողություններ՝ ի պայծառություն Հայոց Եկեղեցու եւ ի բարօրություն հավատավոր հայ ժողովրդի: Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ հայցեց Ամենակալին՝ օրհնել եւ առավել զորացնել երկու ժողովուրդների դարավոր եղբայրությունը, Ռուսաստանի եւ Հայաստանի արդյունավետ համագործակցությունը:

Արարողության առիթով իր սրտի խոսքն ասաց նաեւ Կայսերական ուղղափառ պաղեստինյան ընկերության նախագահ Սերգեյ Ստեպաշինը՝ ուրախություն հայտնելով ցուցահանդեսի բացման կապակցությամբ: Վերջինս անդրադարձավ Ռուսաստանի հայ համայնքի աշխույժ ազգային-եկեղեցական կյանքին, խոսեց երկու Եկեղեցիների գործակցության մասին:

Ցուցահանդեսը ողջունեց նաեւ Պատմության պետական թանգարանի տնօրեն Ալեքսեյ Լեւիկինը: Կարեւորելով ցուցահանդեսի բացումը՝ պրն Լեւիկինը վստահությամբ նշեց, որ այն կհարստացնի Մոսկվայի մշակութային կյանքը: Նա իր խոսքում, ներկայացնելով հայ-ռուսական բազմադարյա կապերը, մասնավորապես ընդգծեց պատմության ընթացքում հայորդիների ունեցած կարեւոր դերակատարությունը Ռուսաստանի պետականության զարգացման եւ զորացման գործում:

Վերջում ցուցահանդեսի բացման կապակցությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ հյուրերին շնորհակալական խոսքով դիմեց թանգարանի պատասխանատու Տիգրան Մանասյանը: Վերջինս, ներկայացնելով թանգարանի առաքելությունը, նշեց, թե թանգարանի անունն իսկ վկայում է, որ այն նպաստելու է հոգեւոր, մշակութային եւ պատմական նվիրական արժեքների պահպանմանը, հայ եւ ռուս ժողովուրդների մշակույթների փոխհարստացմանը: Նա հավելեց, որ հայրենիքից հեռու ապրող հայերի համար եկեղեցական համալիրը՝ իր զանազան կառույցներով, դարձել է ոչ միայն հոգեւոր, այլեւ ազգային ու մշակութային կյանքի կենտրոն:

Արարողությունն ավարտվեց հայրապետական Պահպանիչ աղոթքով:

Մայիսի 16-ին թեմի առաջնորդարանում, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ, գումարվեց Գերագույն հոգեւոր խորհրդի նիստը: Անդրադառնալով մայիսի 15-ին արցախա-ադրբեջանական սահմանին

արձանագրված հերթական սադրանքին՝ հանդես եկավ հայտարարությամբ:

Հայտարարության մեջ մասնավորապես ասվում է.

«Տեղեկանալով մայիսի 15-ին արցախա-ադրբեջանական սահմանին ադրբեջանական զինուժի կողմից ձեռնարկված սադրիչ գործողությունների մասին՝ մեր մտահոգությունն ենք արտահայտում եւ խստորեն դատապարտում կատարվածը:

Ղարաբաղյան հակամարտությունը ռազմական ճանապարհով հանգուցալուծելու՝ Ադրբեջանի կողմից որդեգրված քաղաքականությունը, իրավիճակի շարունակական սրացումը եւ դրանց հետեւանքով պատճառվող մարդկային կորուստները մեծապես վտանգում են հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված քայլերը, նաեւ ձախողեցնում միջազգային հանրության ջանքերով սկզբնավորված բանակցային գործընթացը:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, հավատարիմ մնալով իր խաղաղարար առաքելությանը, պիտի շարունակի ամենայն ջանք գործադրել՝ հանուն հակամարտության խաղաղ կարգավորման, արցախաբնակ մեր զավակների անվտանգ եւ ապահով կյանքի»:

Մայիսի 17-18-ին Գերագույն հոգեւոր խորհուրդը շարունակեց իր աշխատանքը:

Ժողովի մնացյալ նիստերն ատենապետեց ԱՄՆ հայոց արեւմտյան թեմի առաջնորդ Հովնան արք. Տերտերյանը:

Գերագույն հոգեւոր խորհուրդը քննարկեց Ազգային-եկեղեցական ժողովի՝ 1945 թվականին գործադրության մեջ դրված կանոնադրության լրամշակված նախագիծը: Այս առնչությամբ զեկույց ներկայացրեց Կանոնադրությունների մշակման հանձնախմբի անդամ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գեւորգ Դանիելյանը: Լուսաբանություններ տվեց նաեւ հանձնախմբի անդամ, Մայր Աթոռի դիվանապետ Արշակ եպս Խաչատրյանը:

Հանգամանալից քննությունից հետո Գերագույն հոգեւոր խորհուրդն ընդունեց կատարված աշխատանքը եւ թելադրեց, Վեհափառ Հայրապետի օրհնությամբ հաստատված, նախագիծը ներկայացնել հունիս ամսին գումարվելիք Եկեղեցական-ներկայացուցչական ժողովին:

2017 թ. հունիսի 6-9-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կայանալիք Եկեղեցական-ներկայացուցչական ժողովի նախապատրաստական աշխատանքների մասին տեղեկություններ հաղորդեց ժողովի կազմակերպիչ հանձնախմբի պատասխանատու Նաթան արք. Հովհաննիսյանը: ԳՀԽ-ի անդամները, գնահատանքով ընդունելով կատարված աշխատանքը, իրենց թելադրությունները կատարեցին ժողովի առնչությամբ:

Ժողովին զեկույցով հանդես եկավ Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքական տեղապահ Գարեգին արք. Բեքչյանը՝ ներկայացնելով Պատրիարքությունում տիրող բարդ իրավիճակը: Գերագույն հոգեւոր խորհուրդը մտահոգություն հայտնեց Հայոց Պատրիարքությունում ստեղծված կացության առնչությամբ, երբ պատրիարքական ընտրյալ տեղապահը հնարավորություն չունի ձեռնամուխ լինելու իր պարտականությունների իրականացմանը: Գերագույն հոգեւոր խորհուրդը զորակցություն հայտնեց Պատրիարքական տեղապահին՝ հորդոր ուղղելով, որ Պատրիարքության հոգեւոր դասի եւ ազգայինների հետ գործակցության խաղաղ մթնոլորտի մեջ ջանքեր ներդրվեն պետական պատկան կառույցների հետ բարվոք լուծումներ գտնելու ստեղծված կացությանը:

Շարունակությունը՝ էջ 4

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 6-ՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ՆԻՍՏԻՆ

Մեծարգո՛ Նախագահ Հայաստանի Հանրապետության,
Հարգարժա՛ն պատգամավորներ,

Հարգելի՛ ներկաներ,

Հայրապետական Մեր ողջույնն ու օրհնությունն ենք բերում Ձեզ եւ շնորհավորում Ազգային ժողովի նորընտիր պատգամավորներին՝ 6-րդ գումարման այս առաջին նիստի առիթով:

Ազգային ժողովի դերակատարությունը պետական կառավարման համակարգում այսուհետ էականորեն ընդլայնվում է՝ պայմանավորված սահմանադրական փոփոխությունների արդյունքում խորհրդարանական կառավարման անցնելու հանգամանքով: Առավել մեծ լիազորություններով ու իրավասություններով օժտված բարձրագույն մարմին որպես՝ Ազգային ժողովն ստանձնում է նաեւ առավել մեծ պատասխանատվություն մեր երկրի ու ժողովրդի կյանքում, մեր ներկայի եւ ապագայի հանդեպ:

Մեր պետականության կայացման եւ մեր երկրում վերափոխումների իրականացման ճանապարհին Ազգային ժողովի կողմից կարեւոր քայլեր են ձեռնարկվել՝ ստեղծելու օրենսդրական հիմքերը իրավական պետության ու քաղաքացիական հասարակության ձեւավորման, մեր երկրում տնտեսության, գիտության, մշակույթի զարգացման համար: Այս տարիներին ջանքեր են ներդրվել նաեւ ապահովելու բարենպաստ միջավայր հոգեւոր եւ ազգային-եկեղեցական կյանքի զարգացման համար:

Բոլոր ձեռքբերումներով հանդերձ՝ մեր կյանքից, սակայն, դեռեւս թոթափված չեն խնդիրներն ու դժվարությունները: Ծանրակշիռ ջանքեր պահանջող ուղի պիտի անցնենք՝ կերտելու համար մեր ժողովրդի բարօր կյանքը, ապահովելու խաղաղությունը մեր սահմաններում, պաշտպանելու մեր ժողովրդի իրավունքները եւ իրագործելու համար ազգային մեր իդեալները:

Մեծարգո՛ պատգամավորներ, բարձրագույն օրենսդիր մարմնում դուք կոչված եք մեր երկրին ու հավատավոր ժողովրդին ծառայելու ևվիրական, մեծ ու պատասխանատու առաքելության: Օրենքները, որոնք պիտի ընդունվեն այս բարձր մարմնում, պիտի ամրացնեն եւ առաջնթաց բերեն մեր հասարակական կյանքին, դառնան հարազատ հայելին մեր ինքնության, մեր արժեքների, արտահայտեն մեր ժողովրդի իղձերը, ամրապնդեն ազգային մեր համերաշխությունն ու միասնությունը: Խորհրդարանը նաեւ կարեւոր հարթակ է, որտեղ բազմակարծությունը, մտքերի ու նախաձեռնությունների բազմազանությունը՝ ծնունդ առած հայրենասեր ու նախանձախնդիր նույն ոգուց, առավել պիտի ընդլայնեն մեր երկրի զարգացման հեռանկարները: Հայացքների ու տեսակետների տարբերությունները, սակայն, երբեք չպիտի դառնան պատճառ հակառակությունների ու անհանդուրժողականության՝ խոչընդոտելով Ազգային ժողովի արդյունավոր առաքելությունը: Ի դեպ է այսօր հիշել ս. Ներսես Շնորհալու պատգամը. «Միութիւն ի կարեւորս, ազատութիւն ի երկրայականս, եւ սէր՝ յամենայնի»: Հավատարմորեն հետեւեք հայրապետի հորդորին, պահպանեք միությունը կարեւոր գործերում, ազատությունը՝ երկրորդականներում, եւ սերը՝ ամեն ինչում:

Մեր մաղթանքն է, որ համերաշխ գործակցությամբ միավորեք ձեր ջանքերն ու ևվիրումը հանուն մեր հայրենիքի ու ժողովրդի խաղաղ, լուսավոր ու բարի կյանքի: Աղոթում ենք, որ Աստված զորացնի ձեզ հայրենասեր ոգով, պարգեւի եռանդ ու կորով՝ մնայուն ձեռքբերումներ արձանագրելու ձեր բարձր առաքելության մեջ: Հարուցյալ մեր Տիրոջ շնորհներն ու հաղթական սուրբ խաչի պահպանությունն ենք հայցում ձեզ ամենքիդ եւ Սուրբ Հոգու առաջնորդությունը:

Գերագույն հոգեւոր խորհրդի հերթական ժողովը Մոսկվայում

Սկիզբը՝ էջ 3

Անդրադարձ կատարելով այս գործընթացում Արամ արք. Աթեշյանի դրսեւորած կեցվածքին՝ Գերագույն հոգեւոր խորհուրդն անհրաժեշտ համարեց հորդորել նրան, առաջնորդվել Հայ Եկեղեցու կարգերով եւ կանոններով, զորավիգ լինել Պատրիարքական ընտրյալ տեղապահին եւ ձեռնարկել անհրաժեշտ քայլեր՝ Պատրիարքության բնականոն կյանքի վերականգնման համար:

Գերագույն հոգեւոր խորհուրդը քննության առավ նաեւ 2018 թվականին Երիտասարդության տարվա տոնախմբությունների հետ առնչված ծրագրերը: Դեռեւս 2016 թվականի ԳՀԽ՝ նյույորքյան ժողովի ժամանակ որոշում էր կայացվել 2018 թվականը հռչակել իբրեւ Երիտասարդության տարի:

Այս կապակցությամբ տարվող աշխատանքների մասին զեկույց ներկայացրեց Հովնան արք. Տերտերյանը: Տեղեկացվեց, որ այդ տարում առանձին տարածաշրջաններում նախատեսվում են երիտասարդական հավաքներ ու միջոցառումներ, հուլիս ամսին աշխարհասփյուռ թեմերի երիտասարդների մասնակցությամբ կկազմակերպվի նաեւ եռօրյա մեծ ուխտագնացություն դեպի Հայաստան եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածին: Եռօրյա հավաքը կավարտվի հայրապետական Պատարագով:

ԳՀԽ-ի եռօրյա ժողովի ավարտին Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի մասին զեկույց ներկայացրեց թեմական առաջնորդ Եզրաս արք. Ներսիսյանը՝ երախտագիտություն հայտնելով Ամենայն Հայոց Հայրապետին՝ Գերագույն հոգեւոր խորհրդի հերթական նիստը Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմում անցկացնելու համար:

Եզրաս սրբազանը, համառոտ պատմական ակնարկ կատարելով Ռուսաստանում հայոց թեմի հաստատման մասին, ներկայացրեց թեմի ներկայիս գործունեությունը: Սրբազան հոր առաջնորդության տարիներին թեմում գրանցվել է 83 ծուխ, գործող եկեղեցիների թիվը 7-ից հասցվել է 41-ի, հոգեւոր սպասավորների թիվը 8-ից բարձրացվել է 34-ի: Կառուցման ընթացքի մեջ է 15 եկեղեցի, որոնցից 9-ի օծումն ու հանդիսավոր բացումը նախատեսվում է կատարել 2017 թվականին՝ թեմի հիմնադրման 300-ամյա հոբելյանի շրջանակներում:

Սրբազան հայրն անդրադարձավ թեմի հոգեւոր-մշակութային կյանքին, որին մեծապես նպաստեցին 2013 թ. Մոսկվայի Ս. Պայծառակերպություն առաջնորդանիստ նոր եկեղեցու օծումը եւ եկեղեցական համալիրի բացումը: Հոգեւոր-քարոզչական գործունեության շրջագծում կազմակերպվում են ուխտագնացություններ դեպի Մոսկվայի առաջնորդանիստ տաճար եւ տարբեր համայնքներ, առաջնորդարանում կազմակերպվում են հոգեւոր զրույցներ:

Թեմի գիտական-մշակութային կյանքին նպաստում է հայագիտության նորաստեղծ կենտրոնը, որը պարբերաբար կազմակերպում է գիտաժողովներ, գրքերի շնորհանդեսներ, բանախոսություններ: Հիմնվել են «Տապան» թանգարանը եւ նորագույն սարքավորումներով հագեցած գրադարանը: Հայաշատ քաղաքներում հրատարակվում է 4 երկլեզու ամսաթերթ, լույս են ընծայվել երկու տասնյակից ավելի գրքեր:

Մեծ ուշադրություն դարձնելով կրթության եւ հայեցի դաստիարակության գործին՝ գործում է Սանկտ Պետերբուրգի թիվ 259 միջնակարգ դպրոցը, ավելի քան 3000 երեխա հաճախում է 18 հայորդյաց տուն, որոնց մեջ գործում են զանազան խմբակներ: 2006 թ. հիմնված Մոսկվայի հայորդյաց տանը, անցած 10 տարվա ընթացքում, կրթվել է 8000 հայորդի: Առաջիկայում Մոսկվայի եկեղեցական համալիրի տարածքում կբացվի «Սուրբ Գրիգոր Նարեկացի» գիմնազիան, կկառուցվի նաեւ մանկապարտեզ-կրթարան: Սրբազանը տեղեկացրեց, որ բոլոր ծխերում գործում են երիտասարդաց միություններ, հանդիպումներ են կազմակերպվում Մոսկվայի ԲՈՒՀ-երում սովորող հայ ուսանողների հետ:

Նշվեց, որ թեմը մասնակցում է Հայ Եկեղեցու բարեգործական ծրագրերին թե՛ հայրենիքում եւ թե՛ նրա սահմաններից դուրս, մեծ աջակցություն է ցուցաբերում Արցախին: Առաջնորդանիստ համալիրում գործում են սոցիալական օգնության եւ իրավաբանական անվճար խորհրդատվության բաժինները: Վերջինիս ծառայություններից օգտվում են ոչ միայն հայորդիները, այլեւ օտարազգիներ: Հիմնվել է նաեւ բժշկական երկու հաստատություն. ատամնաբուժարան Սանկտ Պետերբուրգում եւ բժշկական կենտրոն Մոսկվայում, որտեղ եւս անվճար ծառայություններ են մատուցվում կարիքավորներին:

Գերագույն հոգեւոր խորհրդի անդամները գոհունակությամբ ընդունեցին ներկայացված զեկույցը՝ իրենց գնահատանքը հայտնելով թեմի կողմից իրականացվող բազմաբնույթ ազգաշահ եւ եկեղեցապատ ծրագրերի կապակցությամբ: Ժողովականները Աստծո զորակցությունը հայցեցին առաջնորդ սրբազան հորը եւ հոգեւոր դասին՝ իրենց սվիրյալ եւ օգտաշատ ծառայության մեջ:

Ժողովն ամփոփվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության ու գնահատանքի խոսքով:

Մայիսի 19-ին Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի առաջնորդարանում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին Ռուսաց լեզվի ակադեմիայի նախագահության կողմից հանձնվեց ակադեմիայի բարձրագույն պարգեւը՝ «Բեթղեհեմյան ոսկե աստղ» շքանշանը: Այն հաստատվել է 2000 թվականին Մոսկվայի եւ Համայն Ռուսիո երջանկահիշատակ Ալեքսի Բ Պատրիարքի օրհնությամբ՝ ի նշանավորումն մեր Տեր Հիսուս Քրիստոսի ծննդյան 2000-ամյակի:

Արարողությունը բացվեց Տերունական աղոթքով, որից հետո խոսք ասաց ակադեմիայի նախագահ Յուրի Բելյաեւը: Ակադեմիայի նախագահն իր ուրախությունը հայտնեց շքանշանի հանձնման առիթով՝ ընդգծելով, որ ժամանակին, Ալեքսի Բ Պատրիարքի շնորհաբաշխության ընթացքում, վերջինիս կողմից մատանանշվել էին ապագա շքանշանակիրները, որոնց թվում նաեւ՝ Սերբ Ուղղափառ Եկեղեցու Պատրիարքը եւ Ամենայն Հայոց Հայրապետը: Բարձրորեն գնահատելով Գարեգին Բ Հայրապետի կարեւոր ավանդը հայ եւ ռուս կապերի ամրապնդման գործում եւ գոհունակությամբ կատարելով հոգելույս Պատրիարքի կամքը՝ ակադեմիայի նախագահը մար՝ աղոթքով հիշելով բարեհիշատակ Ալեքսի Բ Պատրիարքին եւ ընդգծելով, որ բազում ջերմ ու բարի հիշողություններ է կրում իր սրտում: Նորին Սրբությունը, վերհիշելով Պատրիարքի հետ ունեցած իր հանդիպումները եւ Մոսկվայում ու Սանկտ Պետերբուրգում համատեղ կատարած հոգեւոր արարողությունները, ընդգծեց, որ ձեւավորված այդ սերտ կապերը եւ գործակցությունը այսօր էլ շարունակվում են Կիրիլ Ա Պատրիարքի հետ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ հատկանշական նկատեց, որ պարգեւի հանձնման արարողությունն իրականացվում է Ռուսաստանում՝ հայոց թեմի հաստատման

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին փոխանցեց դեռեւս 2013 թվականին «Բեթղեհեմի աստղ» ազգային բարեգործական հիմնադրամի մասնակցությամբ եւ Ռուսական կայսերական տան աջակցությամբ նրան շնորհված «Բեթղեհեմյան ոսկե աստղ» շքանշանը եւ վկայականը:

Այնուհետեւ իր օրհնությունը ներկաներին բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Վեհափառ Հայրապետն իր շնորհակալությունը հայտնեց Ռուսաց լեզվի ակադեմիայի անդամներին՝ իրեն շնորհած պարգեւի համար՝ հիշեցնելով բարեհիշատակ Ալեքսի Բ Պատրիարքի հետ ունեցած հանդիպումները, որոնց թվում նաեւ՝ Սերբ Ուղղափառ Եկեղեցու Պատրիարքը եւ Ամենայն Հայոց Հայրապետը: Բարձրորեն գնահատելով Գարեգին Բ Հայրապետի կարեւոր ավանդը հայ եւ ռուս կապերի ամրապնդման գործում եւ գոհունակությամբ կատարելով հոգելույս Պատրիարքի կամքը՝ ակադեմիայի նախագահը 300-ամյակի հոբելյանական տարում: Գարեգին Բ Հայրապետը մաղթեց, որ Աստծու օրհնության ներքո էլ ավելի զորանան դարավոր կապերը եւ եղբայրական ոգին հայ եւ ռուս հավատակից ժողովուրդների, նոր իրագործումներով բարեգարդվի երկու երկրների համագործակցությունը, եւ հավետ շարունակվի հարյուրամյակների պատմություն ունեցող այս բարեկամությունը:

Արարողությանը ներկա էին Գերագույն հոգեւոր խորհրդի անդամները, թեմի հոգեւոր դասի եւ Ռուսաց լեզվի ակադեմիայի ներկայացուցիչներ:

Համբարձման տոնը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

Մայիսի 25-ին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին նշեց մեր Տեր Հիսուս Քրիստոսի համբարձման տոնը: Այս տոնին հիշատակվում է 1441 թվականին Ամենայն Հայոց Կաթողիկոսության Աթոռը Սիս քաղաքից Մայր Աթոռ Ս. Էջմիածին փոխադրելու պատմական օրը: Ն. Ս. Օ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ՝ տոնը հռչակվել է նաեւ Ս. Էջմիածնի ուխտի օր:

Տոնի կապակցությամբ Մայր Աթոռ էին ժամանել Հայ Եկեղեցու հայաստանյան թեմերի առաջնորդները եւ բազում ուխտավորներ:

Մայր տաճարում, հանդիսապետությամբ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Պատարագ: Պատարագիչն էր Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպս Միրզախանյանը:

Ս. Պատարագի ընթացքում սրբազան հայրը քարոզեց օրվա խորհրդի շուրջ՝ նշելով, որ Համբարձման գեղեցիկ օրը կրկնակի տոն է Հայ Առաքելական Եկեղեցու համար, որովհետեւ նշվում են թե՛ մեր Տեր Հիսուս Քրիստոսի հրաշափառ համբարձման մեծագույն հիշատակը եւ թե՛ կիլիկյան Սսից Ամենայն Հայոց Կաթողիկոսական Աթոռի տեղափոխումը Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

Պատարագիչ սրբազանը մասնավորապես ասաց. *«...Հարությունից հետո, երբ արդեն լրացան քառասուն օրերը, Հիսուսը կրկին իր աշակերտների հետ վերադարձավ Երուսաղեմ, քայլեց այն ճանապարհով, որով քայլել էր խաչելությունից առաջ, անցավ Գեթսեմանիի պարտեզով եւ գնաց դեպի Ձիթենյաց լեռ, որտեղ աշակերտներին պետք է տար տիեզերական վերջին պատգամները: Եվ դրանից հետո նաեւ համբարձվեր երկինք: ...Հիսուսը քառասուն օր մնաց երկրի վրա. մնաց, որովհետեւ հարկավոր էր, որ Իր հարության իրողությունը հաստատեր առաքյալների մեջ եւ մեկ անգամ եւս պատրաստեր առաքյալներին՝ դիմակայելու այն ամենին, ինչ սպասվում էր նրանց:*

Մարդացել էր Աստված, որպեսզի հաշտեցներ Աստծուն մարդու հետ, մահացել, թաղվել էր մարմնով եւ կենդանի աստվածությամբ հարություն առել: Տերը համբարձվեց երկինք, բայց թողեց այն պատգամը, որ գալու է, որպեսզի դատի ողջերին եւ մեռյալներին, որպեսզի արդարներն ունենան հավիտենական կյանք, եւ մեղավորները՝ հավիտենական տանջանք»:

Վիրահայոց թեմի առաջնորդն իր քարոզում անդրադարձավ Համբարձման տոնի ժողովրդական տոնախմբությանը՝ կարեւորելով գեղեցիկ այդ ավանդույթի պահպանությունն ու հանրայնացումը ազգային կյանքում:

Արքեպս հայրը, վերհիշելով 1441 թ. Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռի տեղափոխման պատմությանը, ի մասնավորի նշեց. *«Սա մեր ժողովրդի համար համազգային տոն է, քանի որ կիսում եմ այն կարծիքը, թե Կաթողիկոսական Աթոռը՝ Հայ Եկեղեցու հոգեւոր կենտրոնը, Վաղարշապատում՝ Արեւելյան Հայաստանում, վերահաստատելով՝ մենք կարողացանք պահպանել Արեւելյան Հայաստանի մեր պատմական այս փոքրիկ հատվածը, որի վրա 1918 թ. կազմավորվեց մեր անկախ պետականությունը՝ շնորհիվ Ս. Էջմիածնի եւ նրա զինվորյալ միաբանության»*:

Վերջում Վազգեն սրբազանն Ամենայն Հայոց Կաթողիկոսին շնորհավորեց Համբարձման տոնի առիթով եւ վերահաստատեց Մայր Աթոռի միաբանության սերն ու հավատարմությունը՝ Հայոց Հովվապետի եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդեպ: Սրբազանը Նորին Սրբությանը մաղթեց քաջառողջ, արեւշատ տարիներ՝ շարունակ հովվելու հայ ժողովրդին՝ թե՛ Հայաստանում եւ թե՛ Սփյուռքում:

Պատարագի ավարտին, նախագահությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Հայրապետական մաղթանք, որի ընթացքում հոգեւոր դասն ու ներկա ժողովուրդն աղոթեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անսասանության ու պայծառության համար:

Սրբազան արարողությանը ներկա էին նաեւ «Ավրորա» մարդասիրական մրցանակաբաշխության առիթով Հայաստան ժամանած 2016 թ. մրցանակակիր Մարգարիտ Բարանկիցեն, 2017 թ. մրցանակի հավակնորդ Թոմ Քատինան, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ եւ բարերար Ռուբեն Վարդանյանը, ինչպես նաեւ Վիեննայի պետական համալսարանի աստվածաբանության ֆակուլտետի ծիսագիտության ու խորհուրդների աստվածաբանության ամբիոնի եւ քրիստոնյա Արեւելքի ուսումնասիրության ու հայրաբանության ամբիոնի 32 դասախոսներն ու ուսանողները:

Քահանայից հերթական ժողով Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

Մայիսի 29-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ քահանայից հերթական ժողովը, որին մասնակցում էին Հայաստանի եւ Արցախի թեմերի հոգեւոր սպասավորները, ինչպես նաեւ ԱՄՆ հայոց արեւմտյան թեմից, Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի, Հարավային Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի եւ Իռլանդիայի, Ուկրաինայի, Ֆրանսիայի, Բուլղարիայի, Վրաստանի, Ռումինայի եւ Իրաքի հայոց թեմերից, Կենտրոնական Եվրոպայում հայրապետական պատվիրակությունից: Ժողովին ներկա էին Մայր Աթոռում պաշտոնավարող եպիսկոպոսները, հայաստանյան թեմերի առաջնորդները, Մայր Աթոռի 50 միաբան եւ 205 քահանա:

Առավոտյան, Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ, եկեղեցականները Մայր տաճարում մասնակցեցին Գիշերային ժամերգությանը:

Ժողովի սկզբում բացման խոսք ասաց ժողովի կազմակերպիչ հանձնախմբի նախագահ, Շիրակի թեմի առաջնորդ Միքայել եպս Աջապահյանը: Սրբազան հայրը, գոհունակությամբ արձանագրելով, որ քահանայից ժողովը գումարվում է մայիսյան տոների շրջանում, մաղթեց, որ Հայոց Եկեղեցու քահանայից դասը, զորացած այդ հաղթական ոգով եւ լցված Սուրբ Հոգու շնորհներով, նորանոր հաջողություններով պսակի իր հոգեւոր նվիրական առաքելությունը:

Այնուհետեւ «Ծխական քահանայի իրավունքներն ու պարտականությունները» թեմայի շուրջ զեկույցով հանդես եկավ Ներսես քհն. Ռուշանյանը (Արմավիրի թեմ): Զեկույցին հաջորդած քննարկման ընթացքում ժողովի մասնակիցներն անդրադարձ կատարեցին հովվական կյանքում ծխատեր քահանաների պարտականություններին եւ իրավունքներին: Մասնավորապես խոսվեց հովվություններում համայնք-եկեղեցի կապի ամրապնդման, ինչպես նաեւ ծիսական արարողությունների կազմակերպման ուղղությամբ անհրաժեշտ քայլերի մասին: Ընդգծվեց նաեւ խորհրդակատարություններից առաջ արարողությունների մասնակիցների հետ նախապատրաստական եւ ուսուցողական աշխատանքների իրականացման կարեւորությունը:

Երկրորդ զեկույցը («Քահանան եւ հասարակական կազմակերպությունները») ներկայացրեց Փառեն քհն. Առաքելյանը (Արագածոտնի թեմ): Ծխական քահանաների հովվական ծառայության շրջագծում արծարծվեց նաեւ հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության հարցը՝ ի նպաստ տվյալ համայնքի զորացման եւ զարգացման: Ժողովի մասնակից քահանա հայրերը ներկայացրեցին հասարակական տարբեր կազմակերպությունների հետ գործակցության վերաբերյալ իրենց ունեցած փորձառությունը: Քննարկվեցին նաեւ հովվություններում իրականացվող զանազան կրթական, սոցիալական ծրագրերում ՀԿ անդամների ներգրավման հնարավորությունները:

Քահանայից գործադիր մարմնի եւ Քահանայից ընդհանուր ժողովի արդյունավետության վերաբերյալ զեկույցով հանդես եկավ գործադիր մարմնի անդամ Եսայի քհն. Արթեմյանը (Արարատյան հայրապետական թեմ): Տեր հայրը քահանայից դասին ներկայացրեց Վեհափառ Հայրապետի օրհնությամբ ստեղծված գործադիր մարմնի կողմից վերջին տարիների ընթացքում կատարված աշխատանքը եւ արձանագրված արդյունքները: Այս առնչությամբ ժողովականները մասնավորապես քննարկեցին քահանայից դասի կողմից գործադիր մարմնի ուշադրությանը հանձնվող բազմաբնույթ նյութերի եւ խնդիրների ուսումնասիրության եւ արծարծման ընթացակարգը:

Ժողովը եզրափակվեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով: Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց Միքայել սրբազանին եւ կազմակերպիչ հանձնախմբին՝ ուրախությամբ արձանագրելով, որ ժողովին տարեցտարի քահանաների թիվն աճում է եւ Սփյուռքի հայոց թեմերի հոգեւոր սպասավորները եւս մասնակից են դառնում այս հավաքներին:

Վեհափառ Հայրապետն իր գոհունակությունը հայտնեց ներկայացված զեկույցների եւ քահանաների ծառայության հետ առնչվող խնդիրների բարձրացմամբ, արտահայտված մտահոգությունների առիթով:

Խոսելով հոգեւորականի պարտականությունների եւ իրավունքների մասին՝ Հայոց Հովվապետն ընդգծեց, որ եկեղեցականների պարտականություններից են ծնվում իրավունքները, իսկ պարտականությունների ընկալումը սերտորեն կապված է քահանայական կոչման գիտակցության հետ: *«...Երբ կոչման գիտակցությունը, ծառայության պատասխանատվությունն առկա են հոգեւորականի մոտ, որոնք խարսխված են մեր Տեր Հիսուս Քրիստոսի անձի եւ Նրա կերպարի վրա, նա կերպարանավորում է իր անձի ու ծառայական գործերի մեջ մեր Տիրոջը: Եվ այս իմաստով մեր պարտականությունների եւ իրավունքների շրջագիծը հստակ պատկերվում է մեզ, երբ մենք ուսումնասիրում ենք մեր Տիրոջ կյանքը եւ տեսնում, թե Նա ինչպես գործեց եւ ինչպիսի ծառայություն մատուցեց...»,-* ասաց Վեհափառ Հայրապետը:

Նորին Սրբությունը հորդորեց քահանաներին նույն ջանասիրությամբ ու նախանձախնդրությամբ, նույն սիրով եւ պատասխանատվության բարձր զգացումով շարունակել իրենց ծառայությունը՝ ընդգծելով, որ եկեղեցականությունը հիմնական դերակատարություն ունի մեր ժողովրդի բարոյական, հոգեւոր արժեքային համակարգի ձեւավորման առաքելության մեջ:

Ժողովի ավարտին հոգեւորականաց դասը մասնակցեց Երեկոյան ժամերգությանը:

Մայր Աթոռում տեղի ունեցավ շքանշանի հանձնման արարողություն

Մայիսի 20-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ տեղի ունեցավ շքանշանի հանձնման հանդիսավոր արարողություն: Նորին Սրբությունը Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» պատվո բարձր շքանշան շնորհեց Գեւորգյան հոգեւոր ճեմարանի պատմական աստվածաբանության եւ հումանիտար առարկաների ամբիոնի վարիչ, Երեւանի պետական համալսարանի կրոնի պատմության եւ տեսության ամբիոնի դասախոս, փ. գ. թ., դոցենտ Ավետիս Քալաշյանին՝ բարձր գնահատելով հայրենիքին, Հայոց Եկեղեցուն մատուցած նրա երկարամյա արդյունավոր ծառայությունն ու բարի վաստակը:

Արարողությունը բացվեց Տերունական աղոթքով, ապա ՀՀ եւ Գեւորգյան ճեմարանի օրհներգերից հետո երեկույթի մասնակիցներին ողջունեց ճեմարանի տեսուչ Գարեգին վրդ. Համբարձումյանը: «Այս տարիների պաշտոնավարման ընթացքը մեզ համար առիթ է հայացք նետելու քրտնաջան, տքնաջան տարիների աշխատանքի վրա, որ պարոն Քալաշյանն անդուլ կերպով՝ որպես ընծա, նվիրաբերել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնին եւ մասնավորապես Մայր Աթոռի կրթական հաստատություններին՝ Վազգենյան հոգեւոր դպրանոցին եւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանին: Քսան եւ ավելի տարի պարոն Քալաշյանն իր ծառայությունն է բերել այս հաստատություններին եւ ոչ միայն իր գիտելիքներով է ներշնչել մեր սաներին, այլ նաեւ իր հոգեւոր հանդարտությամբ, որն իսկապես ուսանելի է»,- նշեց հայր սուրբը:

Պրն Ավետիս Քալաշյանի եկեղեցասեր կերպարին եւ օգտաշատ ու նվիրյալ գործունեությանն անդրադարձավ նաեւ ճեմարանի դասախոս եւ ԵՊՀ-ի փիլիսոփայության եւ հոգեբանության ֆակուլտետի դեկան, փ. գ. թ., դոցենտ Ալեքսան Բաղդասարյանը:

Այնուհետեւ «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողության ներքո բերվեցին հայրապետական սրբատառ կոնդակն ու շքանշանը:

Հայրապետական կոնդակում, որն ընթերցեց Մայր Աթոռի բարձրագույն հոգեւոր կրթական հաստատությունների վերատեսուչ Գեւորգ եպս Սարոյանը, գրված է. *«Այսօր ուրախ առիթ ունենք գնահատանքի խոսք հղել Ձեզ, սիրելի՛ պրն Քալաշյան, հայրենի մեր երկրին, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն եւ հավատավոր մեր ժողովրդին մատուցած Ձեր արդյունավոր ծառայության համար:*

Երկար տարիներ Դուք մանկավարժական նվիրյալ առաքելություն իրականացրեցիք Երեւանի պետական համալսարանում՝ Ձեր գիտելիքներն ու կարողությունները ծառայեցնելով նոր սերնդի կրթության դժվարին, բայց երախտարժան գործին: Ձեր վաստակը հարստացրեցիք նաեւ հայ գիտությանը մատուցած ծառայություններով, որոնց արդյունքը հեղինակած բազմաթիվ ուսումնասիրություններն ու հոդվածներն են՝ նվիրված փիլիսոփայության, կրոնի եւ Ընդհանրական Եկեղեցու պատմությանը:

Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցում, ապա նաեւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանում Ձեր պաշտոնավարման ընթացքում Մենք ճանաչեցինք Ձեզ եւ ականատես դարձանք Ձեր հավատավոր ոգուն, մեր Սուրբ Եկեղեցու եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդեպ մշտապես դրսեւորած Ձեր որդիական սիրուն ու անկեղծ նվիրումին: Մենք տեղյակ ենք, թե հոգեւոր կրթօջախների ուսանողները ինչպիսի սիրով ու հետաքրքրությամբ են հետեւում Ձեր դասերին, որն ուսման լրացուցիչ խրախույս է նրանց համար: Ձեր սաներից շատերն այսօր ձեռնադրված հոգեւորականներ են, ովքեր ծառայում են մեր Եկեղեցու լուսավոր անդաստանում, Հայրենիքում եւ Սփյուռքում հոգեւոր սնունդ մատուցում մեր ժողովրդի զավակներին: Նրանց բոլորի հոգիներում խոր ակնածանքն ու երախտագիտությունն է Ձեր հանդեպ, որ վաստակել եք Դուք՝ Ձեր ազնիվ, նախանձախնդիր աշխատանքով»:

Այնուհետեւ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը բազմամյա մանկավարժին հանձնեց սրբատառ կոնդակը եւ կուրծքը զարդարեց Հայ Եկեղեցու «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով:

Այս առիթով իր ապրումները երեկույթի մասնակիցներին՝ իր գործընկերներին, սաներին ու հարազատներին, ներկայացրեց պրն Ավետիս Քալաշյանը՝ շնորհակալություն հայտնելով Հայոց Հայրապետին՝ իր անձի հանդեպ դրսեւորած ուշադրության եւ գնահատանքի համար: «Ես չեմ հանդիպել որեւէ մեկին, որ ցանկություն չունենար, չերազեր դասավանդել կամ սովորել հոգեւոր ճեմարանում: Դա հպարտություն է մեր ազգի համար: Ուր էլ լինեմ, ինչ աշխատանքի էլ անցնեմ, մնալու եմ իմ Եկեղեցու նվիրյալ շարքային հավատացյալը»,- նշեց մեծարյալը:

Շնորհաբաշխման արարողության ընթացքում հոգեւոր, ժողովրդական երգերի կատարումներով հանդես եկան ճեմարանի «Էջմիածին» երգչախմբի սաներն ու «Օտրի տրիո» անսամբլը:

Վերջում իր գնահատանքի ու օրհնության խոսքը մեծարյալին ու ներկաներին փոխանցեց Նորին Սրբությունը:

«Այս քսան տարվա ընթացքում պարոն Քալաշյանը եղել է ոչ թե դասախոս, որ գիտելիք է ջամբել մեր սաներին, այլ նա ապրել է այս հաստատության առաքելությամբ ու շահերով եւ այս հաստատության նպատակը դարձել է նաեւ իր կյանքի առաքելության մի մաս: ...Քսան տարվա ընթացքում Դուք պատրաստել եք բազմաթիվ հոգեւորականներ, որոնք այսօր համայնքներում ու ծխերում հովվական ծառայության մեջ են, եւ Ձեր հոգու մխիթարությունը պետք լինի այն, որ նրանց կարեւոր առաքելության մեջ Դուք ունեք Ձեր մասն ու բաժինը: Դուք ապրում եք Ձեր աճեցրած սերնդի մեջ եւ պիտի ապրեք այնքան ժամանակ, որքան նրանք պիտի ապրեն ու գործեն: Մենք բարձրորեն գնահատում ենք Ձեր ծառայությունը»,- նշեց Նորին Սրբությունը:

Վեհափառ Հայրապետը մաղթեց նաեւ, որ բարին Աստված Իր ամենախնամ Աչով հովանի լինի նրան՝ պարգեւելով քաջառողջ արեւշատություն, գործոց հաջողություններ եւ ամենայն բարիք:

Հանդիսությունն ավարտվեց Հայոց Հովվապետի Պահպանիչ աղոթքով:

«Թանգարանների գիշեր» Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

«Թանգարանների գիշեր» միջոցառման շրջանակներում, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Ռուբեն Սեւակի թանգարանում առաջին անգամ հանրությանը ցուցադրվեց Վեհարանի գեղանկարչական հավաքածուից «Իջեցումն խաչից» կտավը, ներկայացվեց բանախոսություն-քննարկում՝ «Հայոց Եկեղեցու մշակութային գործունեությունն այսօր» խորագրով: Բանախոսն էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի արխիվի եւ թանգարանների տնօրեն Ասողիկ քհն. Կարապետյանը:

Ապա տեղի ունեցավ «Հայոց Վեհից այցերը Վատիկան» վավերագրական ֆիլմերի ցուցադրությունը:

Մայր տաճարի ավանդատուն-թանգարանում տեղի ունեցավ «Վատիկանի ընծաները Ս. Էջմիածնին» ցուցահանդեսի բացումը:

Մայր տաճարի ավանդատուն-թանգարանը եւ Ռուբեն Սեւակի թանգարանը գործեցին մինչեւ ուշ գիշեր:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորագիրը Իրանի նախագահին

Մայիսի 20-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորական գիր է հղել Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Հասան Ռոհանիին՝ ԻԻՀ նախագահի պաշտոնում վերընտրվելու կապակցությամբ:

«Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք մեր շնորհավորանքն ու ջերմ բարեմաղթանքները՝ Իրանի Իսլամական Հանրապետության Նախագահի պաշտոնում վերընտրվելու առիթով:

Ուրախ ենք, որ Ձեր նախագահությամբ Իրանի հավատավոր ժողովուրդը շարունակում է եռանդուն աշխատանքով ապահովել հայրենի երկրի առաջընթացն ու զարգացումը:

Մեր ժողովուրդը մեծապես կարեւորում է Հայաստանի եւ Իրանի դարավոր բարեկամական կապերի առավել ամրապնդումը եւ տարբեր ոլորտներում երկկողմանի համագործակցության զորացումը: Վստահ ենք, որ առաջիկա տարիներին եւս մեր երկրների հարաբերությունները պիտի արդյունավորվեն նոր ծրագրերով ու նախաձեռնություններով՝ ի շահ Իրանի եւ Հայաստանի առավել շենացման եւ մեր ժողովուրդների կյանքի բարօրության»,- նշված է Վեհափառ Հայրապետի շնորհավորագրում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի ցավակցագիրը Միացյալ Թագավորության վարչապետին

Մայիսի 23-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցական նամակ է հղել Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության վարչապետ Թերեզա Մեյին՝ Մանչեսթեր Արենայում տեղի ունեցած ահաբեկչության կապակցությամբ, որը պատճառ է դարձել երկու տասնյակից ավելի մարդկային զոհերի եւ բազում վիրավորների:

«Խստորեն դատապարտելով մարդկության դեմ գործվող ահաբեկչությունն ու բռնությունը՝ Մեր վշտակցությունն ենք փոխանցում Ձեզ, Մեծ Բրիտանիայի բարեկամ ժողովրդին, զոհերի ընտանիքներին ու հարազատներին:

Հայցում ենք, որ Բարձրյալն Աստված միսիթարություն ու սփոփանք պարգեւի բոլոր սգակիրներին եւ շուտափույթ առողջություն շնորհի պայթյունից տուժած վիրավորներին»,- նշված է Վեհափառ Հայրապետի ցավակցագրում:

Նորին Սրբությունը մաղթել է, որ Տերը զորակից եւ պահապան լինի Մեծ Բրիտանիայի բարեսեր ժողովրդին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի ցավակցագիրը Ղպտի Եկեղեցու Հովվապետին

Մայիսի 26-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցագիր է հղել Ղպտի Ուղղափառ Եկեղեցու պետ, Ալեքսանդրիայի Պապ եւ Համայն Աֆրիկայի Թավադրոս Բ Պատրիարքին՝ Եգիպտոսի Էլ Մինյա նահանգում Ս. Սամուել Խոստովանողի վանքի մոտակայքում ղպտի ուխտավորների վրա զինված հարձակման եւ երկու տասնյակից ավելի անմեղ անձանց սպանության առիթով:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Գերագույն հոգեւոր խորհրդի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության եւ Հայոց Եկեղեցու հավատացելոց անունից զորակցություն է հայտնել Թավադրոս Բ Պատրիարքին եւ Ղպտի Եկեղեցու հետեւորդներին:

Խստորեն դատապարտելով հարձակումները քրիստոնյաների վրա՝ Վեհափառ Հայրապետը հայցել է ամենողորմ Աստծուն՝ շուտափույթ ապաքինում պարգեւել վիրավորներին եւ երկնային օթեւաններում ընդունել զոհված հավատացելոց հոգիները:

Լրատվական նյութերը՝
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

Էվթանազիայի ֆենոմենը եւ նրա փիլիսոփայական մեկնաբանության առանձնահատկությունները

Էվթանազիայի հիմնահարցը ծագել է անտիկ ժամանակներից եւ միշտ հարուցել թեժ վեճեր: «Էվթանազիա» եզրը առաջարկել է անգլիացի փիլիսոփա Ֆրենսիս Բեկոնը (17-րդ դար, իր «Նոր Օրգանոն» աշխատության մեջ)՝ այդ հասկացության տակ հասկանալով թեթեւ, ոչ ցավագին մահը:

«Թեթեւ մահ» եզրը օգտագործվել է նաեւ Դավանաբանության 1980 թ. մայիսի 5-ին ընդունված «Հռչակագիր էվթանազիայի մասին» փաստաթղթում, որտեղ տրված է էվթանազիայի վերջնական պարզաբանումը. *«Էվթանազիա ասելով՝ հասկացվում է ցանկացած գործողություն կամ ընդհակառակը՝ անգործություն, որն իր էությամբ կամ դիտավորությամբ հանգեցնում է մահվան: Այսինքն՝ իր ուղղակի նշանակությամբ էվթանազիան բժշկի օգնությամբ կանխամտածված սպանությունն է»*:

Դա չի վերաբերում ինքնասպանությանը եւ ցավազրկող թերապիայի հետեւանքով առաջացած մահվանը:

Տարբերում են ակտիվ եւ պասիվ էվթանազիա: Պասիվ էվթանազիայի դեպքում դադարեցվում են բժշկական օգնությունը, կենսապահպան բուժումը, ինչն արագացնում է մարդու բնական մահը: Սովորաբար, երբ խոսում են էվթանազիայի մասին, նկատի են առնում ակտիվ էվթանազիան: Վերջինս մեռնողի օրգանիզմի մեջ այնպիսի դեղամիջոցների ներմուծումն է, որը հանգեցնում է նրան արագ ու ոչ ցավագին մահվան:

Ակտիվ էվթանազիայի ձեւերից է, այսպես կոչված, **«կարեկցող» սպանությունը**. սա առկա է այն դեպքերում, երբ մեռնողի հարազատները կամ ինքը՝ բժիշկը, տեսնելով, թե ինչպես է տանջվում անհուսալի հիվանդը, եւ ի զորու չլինելով օգնելու կամ մեղմելու ցավերը՝ նրա օրգանիզմի մեջ ներմուծում են ցավազրկող դեղամիջոցի գերչափաբաժին, որի հետեւանքով վրա է հասնում մահը: Տվյալ դեպքում խոսքը հիվանդի համաձայնության մասին չէ, քանի որ նա անկարող է արտահայտել իր կամքը:

Ինքնասպանություն եւ «օժանդակող» սպանություն. սա էվթանազիայի երկրորդ ձեւն է, երբ բժիշկն օգնում է հիվանդին հեռանալ կյանքից:

Երրորդ ձեւը տեղի է ունենում առանց բժշկի անմիջական օգնության: Հիվանդն իր կամքով միացնում է սարքը՝ մահվան մեքենան, որը հանգեցնում է իր արագ եւ ոչ ցավագին մահվան:

Պրակտիկայում օգտագործվում է էվթանազիայի հետեւյալ դասակարգումը, կյանքի վերջի մասին բժշկական որոշում՝ (MDEL, Medical decision conserning end of life): Սա իր հերթին բաժանվում է երկու մեծ խմբի.

ա. Բուն էվթանազիա. երբ բժիշկն ակտիվ մասնակցություն ունի հիվանդի մահվան գործում: Սա, փաստորեն, բժշկի կողմից հիվանդի իրազեկված համաձայնությամբ կատարվող սպանությունն է:

բ. Բժշկի օգնությամբ ինքնասպանություն (Physision assisted suicide - PAAS): Երբ բժիշկը պատրաստում է մահաբեր դեղորայքը, որը հիվանդը ներարկում կամ ընդունում է ինքնուրույն, հիվանդի հետ համաձայնեցված անգործություն, հիվանդի կյանքը երկարացնող նշանակումներից հրաժարում եւ կամ հիվանդի տառապանքները մեղմացնող դեղորայքի, ցավազրկողների, քնաբերների չափաբաժինների ավելացում, որի հետեւանքով հիվանդի կյանքը կրճատվում է:

Սովորաբար խոսվում է էվթանազիայի ազատական եւ պահպանողական մոտեցումների մասին: Այս մոտեցումներից յուրաքանչյուրի կողմնակիցները բերում են իրենց փաստարկները:

Էվթանազիայի կողմնակիցները (գոնե բուժումը դադարեցնելու ճանապարհով) հետեւյալ նկատառումներով ընդունելի են համարում.

- Մահը՝ որպես հիվանդի տառապանքները դադարեցնելու վերջին միջոց:
- Հիվանդի մտահոգվածությունն իր հարազատների նկատմամբ («Չեմ ուզում հարազատներիս համար բեռ դառնալ»):
- Հիվանդի եսասիրական (էգոիստական) մղումները («Ուզում եմ մեռնել արժանապատվորեն»):
- Հանրության մեջ հիվանդագին գեների տարածումը կանխելու նպատակով՝ ոչ լիարժեք կյանքի ոչնչացման անհրաժեշտությունը:

- Նպատակահարմարության սկզբունքը. անհուսալի հիվանդների կյանքի պահպանությանն ուղղված անարդյունք եւ երկարատեւ միջոցառումների դադարեցում, որպեսզի բժշկական սարքավորումներն օգտագործվեն հիվանդության ավելի նախնական փուլերում գտնվող հիվանդների վերականգնման համար:
- Տնտեսական գործոնը. մի շարք անբուժելի հիվանդությունների բուժումը եւ կյանքի պահպանումը պահանջում են բավական թանկարժեք դեղորայքի եւ սարքավորումների կիրառում:

Հարկ է նշել, որ վերջին երեք սկզբունքները լայնորեն օգտագործվել էին ֆաշիստական Գերմանիայում, որտեղ ոչ լիարժեք մարդկանց ոչնչացումը, ինչպես նաեւ ծանր վիրավորների սպանությունը ոչ այլ ինչ էր, եթե ոչ պետական քաղաքականություն...

Էվթանազիայի հակառակորդները բերում են հետեւյալ փաստարկները.

- Կրոնական, բարոյական դիրքորոշումներ («Մի՛ սպանիր» եւ «Սիրի՛ր մերձավորիդ՝ հանուն Աստծո»):
- «Ինքնամաքրում՝ տանջանքի միջոցով» եւ «Ծանր հիվանդ մարդկանց խնամքի միջոցով փրկվելու հույս»:
- Բժշկությանը հայտնի են ոչ քիչ դեպքեր, երբ ծանր, անբուժելի համարվող հիվանդությունը, օրինակ՝ քաղցկեղը, ինքն իրեն բուժվել է:
- Բժշկության զարգացման իմաստը բուժման նոր մեթոդների, հնարավորությունների, ուղիների փնտրումն ու հայտնաբերումն է, այսօր անբուժելի համարվող հիվանդությունների եւ մահվան դեմ պայքարն է:

Եթե հիվանդությունն այսօր անբուժելի է, ամեն կերպ պետք է ձգտել դարձնել այն բուժելի, ոչ թե թեթեւ ձեռքով ու սրտով հայտարարել անբուժելի է ու հեշտ ճանապարհով հիվանդից ազատվել:

Հասարակության ակտիվ սոցիալական դիրքորոշման պարագայում՝ գործնականում հաշմանդամության ցանկացած փուլում գտնվող մարդու վիճակը հնարավոր է վերականգնել եւ նրան վերադարձնել հասարակական ակտիվ կյանքի:

Էվթանազիայի առավել հետեւողական հակառակորդները հոգեւորականներն են, ովքեր թե՛ ակտիվ եւ թե՛ պասիվ էվթանազիայի պարագայում դա համարում են Աստծո ստեղծած օրենքներին հակառակ կատարվող գործողություն:

Բժիշկների եւ իրավագետների ճնշող մեծամասնությունն էվթանազիան կտրականապես անթույլատրելի է համարում, եթե նույնիսկ այն ձեռնարկվում է բացառապես «գթասրտության» նկատառումներով:

Եվ չնայած դրան՝ կան երկրներ (Հոլանդիա, մասամբ Բելգիա, ԱՄՆ-ի Օրեգոնի նահանգ, Ֆրանսիա), որտեղ էվթանազիան թեեւ մեծ վերապահումներով, այդուհանդերձ իրավաբանորեն ամրագրվել է համապատասխան օրենքների մեջ: Ինչո՞վ է դա պայմանավորված:

Կենսահույզ այս հիմնահարցը, ինչպես վերը նշվեց, չի ծագել 20-րդ դարում, այլ ունի իր երկար պատմությունը: Այսպես՝ միջին դարերում հազարավոր ռազմիկներ մնում էին մարտի դաշտում՝ ծանր վիրավորված, մահամերձ ու անփոխադարձելի վիճակում: Նրանք դատապարտված էին անխուսափելի մահվան՝ հոգեվարքի տանջալի ապրումներով:

Այդպիսի իրավիճակներում մահը դիտվում էր որպես փրկություն: Մարտի դաշտում գործում էին հատուկ պատրաստված մարդիկ՝ խաչակերտ դաշույններով, որոնք իրականացնում էին մեռնողի վերջին «ցանկությունը»: (Նկատենք, որ նույնիսկ մահամերձ մարդու սրտի բաղձանքը չի կարող լինել մահը: Ինչքան էլ նա ասի՝ երանի մեռնե՞ի եւ ազատվեի այս տանջանքներից, այնուամենայնիվ, սրտի խորքում նա մտածում է. «Մի հրա՜շք լիներ, մի ճա՛ր գտնեին եւ ինձ ազատեի՞ն այս ցավերից, եւ ես ապրեի...»: Իրականությունը սա է):

Այդ դաշույնն ուներ իր անվանումը՝ «միգերկորդիա», որը թարգմանաբար նշանակում է «գթասրտություն»: Արեւմտյան Եվրոպայում դեռեւս 19-րդ դարի 60-ական թթ. գոյություն ունեին էվթանազիան խրախուսող գաղտնի ընկերություններ՝ «Մխիթարիր իմ վիշտը» անվանումով:

Շարունակելի

Սուսաննա ԴԱՎԹՅԱՆ
Բժշկական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԿՈՍՏԱՆԴԻՆ ԵՐԶՆԿԱՑՈՒ ԱՊՐՈՒՄՆԵՐԻ ԱԵՎԱՐՀԸ

Սկիզբը՝ թիվ 4, 6, 9

Տաղերգուի խորին համոզմամբ երջանիկ է նա, ով մասն ունի այդ լույսից՝ առավոտից...

Առավոտը, լույսի ծնունդ լինելով հանդերձ, իր մեջ ունի ամեն լավ բան, եւ ինչ լավ է առավոտյան՝ արշալույսին սեր է, կյանք, նույնիսկ մահը:

Արշալույսին, երբ իր տիրական իրավունքների մեջ է զվարթ ու գերազանցիկ լույսը, արեգակի լույսից կենդանանում է երկիրը, լեռ ու դաշտ պատվում են կանաչով, ծաղկում են ծառերը, քացրաձայն երգում են թռչունները, ցնծում եւ ուրախանում է ողջ բնությունը, ապրելու տենչով են բռնկվում նույնիսկ տխուր ու հիվանդ մարդկանց սրտերը: Բանաստեղծն անմահության «տխրեալ աղբիւր» է, պայծառ լույս, նա կենդանություն է պարգեւում անգամ մեռած մարդուն.

Մայրուն եղայ եւ վարդէջուր,
Անմահութեն բխեալ աղբիւր,
Լոյս եմ պայծառ՝ աչիցըն կուր,
Առնեմ կենդանի զմարդըն մեռեալ:

Եվ այդ լույսի մեջ բռնկվում են սիրո հրդեհները: Լույսի, բնության փառաբանումը միանում է սիրո երգին՝ սիրած կնոջ գովքին: Գարնան հետ ծնվում, արթնանում է սերը: Սերը բնությունն ինքն է: Կյանքը սիրո ծնունդ է եւ գոյություն ունի միայն սիրո ուժով, սիրո իշխանությամբ: Սերն է իշխում աշխարհում, եւ բանաստեղծը երջանիկ սիրո տարերքի մեջ աշխարհի բոլոր սիրո տերերին հրավեր է կարդում՝ գալ գարնան խնդուն ծաղկունքին լսելու իր հազար դաստանները, սիրո երգերը, մասնակցելու կերուխումի, երգ ու պարի, սիրո եւ ուրախության.

Եկայք մտնունք ի բաղչայն,
Խօսիմ ես հազար դաստան,
Որտեղ որ սիրու տէր կան,
Ամէնն մեզ մօտ թող գան:

Երգում է բլբուլը, եւ բնություն ու մարդ կարծես ձուլվում են իրար, մեծ հանդես՝ խրախճանք սարքում.

Մեզլիս զուգեմ ի սայրան,
Բլբուլն է ներս ի մաստան,
Մաղի լուսեղէն մեծ տան
Կանգնին ու գինի մեզ տան:

Նա խնդրում է երաժշտին նվագել, ասել «սիրու բան», որ խնջույք զարդարող ջահել կինը՝ գեղեցիկ ու նրբիրուն Մորճը, պարի իրեւց համար, որպեսզի երեւան գան նրա լուսնի նման տեսքն ու բարակ հասակը, տեսնի կնոջ ծովանման աչքերը, աղեղանման լարված հոնքերը, որոնք պահապան են կանգնել դեմքին, եւ ինքն էլ վախենում է մահացու խոցվել նրանից: Նա սիրո հիվանդ է, անվերջ ապրում է սիրած կնոջով, սպասում դեղ ու ճարի: Նրա աչքին տիեզերքը, երկինք, երկիր, ողջ բնությունը բռնված են սիրո տենդով, եւ սիրած կինն էլ այդ տիեզերքի ամենապայծառ պատկերն է.

Մըտրուպ, դու սագէ՛ զչաշթան,
Որ մորճըն խաղայ մոյտան.
Ա՛յ մորճ ու բարակ ’ւ երկայն,
Քո տեսն ի լուսին նման:
Աչերդ է ի ծով նըման,
Ուներդ՝ աղեղան լարման.
Կանգնել սուրաթիդ փասպան,
Վախեմ, թե խոցես մահուան:

Այսուհետ պահանջ է առաջանում ուղղակի լսելու սիրո խոսք, սիրո երգ.

Մաղի է մեզի զօրհան,
Վարդն է մեզ հարիֆ սուլթան,
Մտրուպ բլբուլնի շատ կան,
Խօսին ի սիրու շատ բան:

Շարունակությունը՝ էջ 8

ԿՈՍՏԱՆԴԻՆ ԵՐԶՆԿԱՑՈՒ ԱՊՐՈՒՄՆԵՐԻ ԱՆԽԱՐՀԸ

Սկիզբը՝ էջ 7

Տաղերգուն որոշակիորեն ստեղծագործության նյութ է դարձնում մարդկայինը՝ կինը, առ կինն ունեցած իրական, աշխարհային սերը, հրապարակ է հանում այն որպես ամենավեհ ու ամենագոր ուժ ու հասցնում Աստծուն եւ առ Աստված ունեցած սիրուն հատուկ բարձրության: Եթե Գրիգոր Նարեկացին կյանքի աղբյուր, լույս ու արեւ համարում էր Աստծուն, ապա Կոստանդինը համարում է կնոջը, գովերգում նրան՝ որպես երկնարժան գեղեցկություններով օժտված էակի. երկրի վրա ոչինչ չկա նրա նման գեղեցիկ: Սերը եւ կինը լցնում են Երզնկացու ամբողջ էությունը.

Ի յերկրի ի՞նչ կայ նման քեզ յօրինակ,
Դու յերկնից լուսեղէնքն ես նմանակ.
Քու տեսողդ ես դու լուսին պատրի թամամ,
Որ իմ սրտիս խաւարեալ լոյս կու ծագես:

Բանաստեղծը, մեծ կարոտը սրտում, տենչում է իր սիրելիին: Նա պատրաստ է գետնաքարշ ստրկանալ, ընկնել նրա ոտքերի առաջ.

...Դու գարնան քամի, ես ծաղիկ ծարաւած՝
Իմ ծարաւ սրտիս համար հողմն ինչեց:
... Թէ լիներ, որ զքեզ տեսնի առ յիս գալով
Եւ խնդութեամբ ի դէմ գայի քեզ սիրով,
Ի յերկրի երես դընի քեզ կոխելով
Ու գիոգիս անց հանէի յօժար կամով:

Ով մասն ունի մեծ սիրո, ապա նա ականատեսն է ճշմարտության եւ անմահության, քանի որ այդ սերն է մարդուն կենդանացնողը՝ հոգուն հոգի տվողը.

Ով ընկեր ի քո սիրուդ բանտ ի գնտան,
Յաղիղաթ եւ անմահութեանդ է նա տես,
Ով որ ունի ի քո սիրուդ իրք մի նշան,
Կենդանի մարդ հոգեւոր դու զնա գիտես:

Եվ նա, ով չունի սեր, սիրելի, ուրեմն անբան է եւ անասուն... իսկ կինը քաղցր ու վայելուչ խոսքերով սիրո՛ տիրոջը շաքար է ծախում.

Ով չունի սիրելի սիրով հետ քեզ վառ,
Դու անբան եւ անասուն զնա կոչես,
Դու աճապ քաղցր ու լատի՞ֆ ես խօսելով,
Որ զշաքար ի քո շրթանցդ կու ծախես:

Վերը մեջբերված երկու քառյակներից կարելի է եզրակացնել այն, որ տաղերգուն հանգում է հետեւյալ կենսափիլիսոփայության. ապրում է նա, ով սիրում է, ով հոգում սեր ունի, այլապես կենդանի բանական չես կարող լինել, հոգիդ կլքի մարմինդ, եւ դու կմեռնես...

Եթե Սեւեկան ասում է՝ «ապրել նշանակում է պայքարել», Դեկարտը՝ «ես մտածում եմ, ուրեմն ես գոյություն ունեմ», Բերկլին՝ «գոյություն ունենալ նշանակում է լինել ընկալելի», ապա ԺԴ դարի մեր բանաստեղծի ապրումները, փիլիսոփայական մոտեցմամբ, կարող ենք ձեւակերպել այսպես. «Ապրել նշանակում է սիրել», կամ՝ «ես սիրում եմ, ուրեմն ես գոյություն ունեմ»: Սա կյանքի գաղտնիքները, խորհուրդները եւ կյանքը փիլիսոփայորեն ըմբռնելու եւ հասկանալու մի յուրօրինակ մոտեցում է, որը գալիս է Երզնկացու էությունից:

Սերը Կոստանդինի համար կեցության ձեւ է, կենաց աղբյուր, եւ առանց դրա՝ կյանքը կորցնում է իր իմաստը, մարմինը դառնում անհոգի... մեռած...

Դու ես հոգի իմ հոգւոյս...
...Մարմինս անհոգի զանց քեզ,
Հոգիս անդադար հետ քեզ...

Կամ՝

Այլ չըկայ քեզ, Կոստանդի՛ն, կեանք մուրատով,
Երբ ի իւր քաղցր տեսուն հանց կարօտ ես...

Թվում է, թե բանաստեղծը պատրանք է ապրում. Նա ցնծության մեջ է, երբ սիրած էակը հորդորելով «մանրաքայլում» է: Եվ երբ հանկարծ փայլում է «յերկրին երես», ապա արեւ է ծագում գիշերվա մեջ.

Ասեն՝ եղուկըդ տար սիրով ջերմային,
Երբ որ դուն յորդորելով մանրաքայլես:
Ասեն՝ արեւ ծագեցաւ ի մէջ գիշերիս,
Երբ փայլես յանկարծակի յերկրին երես:

Բայց հանկարծ տեսնում ենք, որ գիշերվա մեջ ծագած Արեւը հեռանում է իր գերուց: Եվ երգիչը հառաչում եւ արտասվում է, որ իր սիրուհին հեռու է իրենից: Այստեղ ցնծությանը, հիացումին հաջորդում եւ ծավալվում է տառապանքը՝ բանաստեղծի աչքերից արտասուք խլելով.

Դու քանի հեռացեալ ես այս քո գերուս՝
Արտասուքն ի վայր թափես ի աչերուս:

Եվ վերջում.

Ա՛յ սուրաթ պայծառ ու պատկեր լուսատես,
Չիմ աչերս ի քո սիրոյդ է՞ր կու զատես:

Իր մի քերթվածի մեջ *(«Կոկնեալ պատասխանի այսպէս ի դէմ»)* Երզնկացին գրում է.

Հոգիս է խիստ յօժար բանից իմաստընոց լըսել.
Մարմինս է հեշտասէր, զի աշխարհէս ինք ծընել.
Ի յերկուքիս միջին՝ մոմ եմ ի մէջ հրոյն վառել.
Անհիմն ու անհաստատ՝ եմ անհանգիստ ի շուրջ եկել:
Ի չորս հակառակէս ուսկամ յերեր եմ մընացել,
Չի հուրն ի վեր քաշէ, նա հողցս ծանոր ի վայր հակել:
Սակաւ մի ի ջրոյն՝ բոցըն հըրոյս է հանդարտել.

Քամին է յօգնութիւն եւ բորբոքէ գհուրըս վառել:
Երկու կամաց ծառայ ղըժար է ինձ յիրաց սաղել.
Կամ հուրն ի ծոցն առնուլ ու անվնաս գինքն պահել...

Սա պատասխան է նախորդ քերթվածի խրատների, որը ստացել էր իր բարեկամից, եւ հենց նրա առաջ է, որ տաղերգուն բացում է իր ներաշխարհը եւ հոգու ու մարմնի միջեւ մոմի պես վառվող սիրտը: Նա հոժար է՝ տրվել հոգուն, բայց մարմինը, որ աշխարհից, հողից է ծնվել, չի թողնում, ու հոգուն ծանր հողը վար է ձգում: Թե սակավ ջրով փոքր-ինչ հանդարտվել է սրտում բռնկված հուրը, ապա քամին, օգնության գալով, բորբոքվում ու մեծ չափերի է հասցնում սրտի կրակը, հուրը: Բանաստեղծի համար շատ դժվար է միեւնույն ժամանակ երկու կամքի՝ մարմնի ու հոգու ծառան լինել. սա, դժվար լինելով հանդերձ, անհնարին է նաեւ այնքանով, ինչքանով որ «հուրն ի ծոցն» մարդն անվնաս մնա կամ «մարմնաւոր ոտօք» ծովի վրա թեթեւ քայլի եւ կամ արագընթաց հողմը մարդ իր ձեռքերով արգելի:

Շարունակելի

Վարդան ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ

1877-1878 թթ. ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ «ՄՇԱԿ» ԼՐԱԳՐԻ ԷՋԵՐՈՒՄ

Սկիզբը՝ թիվ 9

Հրապարակախոսը վկայում է, որ հայի այս հատկանիշներն անտեսված են «քաղաքակիրթ» Եվրոպայի կողմից, եւ վերափոխելով Դեկարտի հայտնի խոսքերը՝ ցավով արձանագրում, որ այսօրվա Եվրոպային «կուլտուրական պատերազմի» փոխարեն հարկավոր է իսկական արյուն թափող պատերազմ. «Լուսավորված աշխարհի սկզբունքն ու դեւիզն է. «Je m'insurge, donc je suis» (ես ապստամբում եմ, ուրեմն ես գոյություն ունեմ): Իսկ հայերը, կարծես, ասում են. «Ես աշխատում եմ, ես տանջվում եմ, ուրեմն ես գոյություն ունեմ»: Ահա, կարծես, հայերի նշանաբանը» *(Ազատասիրական գաղափարները հայ հրապարակախոսության մեջ (1820-1920 թթ.), Եր., 1982, էջ 189)*: Դեռ այս ամենից հետո էլ վիրավորված հրապարակախոսը կարծում է, որ եթե հայերը գաղթեն կամ ոչնչանան, ապա հրական պատասխանատուն կլինի հենց Եվրոպան («ամոթ այն Եվրոպային»), սակայն իրականում սա հայ մտավորականի, գրողի հասունացող այն զայրույթն էր, որ 20-րդ դարասկզբին պիտի ուղղվեր Եվրոպայի ու մարդկության հասցեին: Մի պահ Արծրունին կարծես ընդունում ու յուրացնում է աշխարհում գոյությունը պահպանելու «քաղաքակիրթ» սկզբունքը՝ հույս հայտնելով, որ հայը վերջապես ընդունակ կլինի արորի եւ բահի նման վարժ զենք գործածելու: Ելույթի վերջում Արծրունին արդեն համոզված է, որ ինքնապաշտպանության համար զենք վերցնելով՝ հայը դեմ չի գնում իր «պատմական» սկզբունքներին (ապավինել միայն «կուլտուրական» պատերազմին), այլ հակառակը՝ դա է դառնում միակ դրական եւ օրինավոր միջոցը. «Եթե Թուրքիայի հայը, մի ձեռքով մուրճ, արոր կամ բահ բռնելով, մյուս ձեռքով հրացան կբռնի,- այդ գուցե կլինի միակ միջոցը թուրքաց տիրապետության տակ ճնշված հայոց ազգի համար պաշտպանել եւ ապահովել իր ազգային գոյությունը» *(Ազատասիրական գաղափարները հայ հրապարակախոսության մեջ (1820-1920 թթ.), Եր., 1982, էջ 189)*: Դժվար չէ այստեղ նկատել Ռաֆֆու «Ջալալեդդին» վեպի հերոսի հայտնի խոսքերի (այս վեպը 1877 թվականին լույս տեսավ հենց «Մշակի» էջերում) կրկնությունը, որը կարծես եւս մեկ անգամ հավաստում է, որ հայ մտավորականությունն ամբողջովին մտահոգ էր այս խնդրով: Ռաֆֆին Արծրունուց առաջ էր հասկացել եւ իր հերոսի միջոցով ձեւակերպել աշխարհում գոյությունը պահպանելու քաղաքակիրթ սկզբունքները. «Երբ հարկավոր է խելք բանեցնել, խելքին զոռ տալու է, իսկ երբ պետք է սուր, մարդ պիտի պատրաստ ունենա նրան իր ձեռքում: Մարդկային կյանքը ներկայացնում է մի սարսափելի կռվի հանդիսարան, ով որ ընդդիմադրության շնորհք չունի, նա պիտի ընկնի, անհետանա, ոչնչանա...» *(Ռաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 2, Եր., 1955, էջ 20-26)*: Շարունակության մեջ Ռաֆֆին լուծումը համարում էր աշխատանքային գործիքն ու պաշտպանական զենքը միաժամանակ գործածելը:

Նշենք նաեւ, որ ի հաստատումն այս սկզբունքի ճշմարտացիության (զենք ու գործիք՝ միաժամանակ), 1879-ին «Մշակի» հ. 208-ում Արծրունին տպագրում է մի հոդված՝ «Տխուր եւ ուրախալի համբավներ» վերնագրով, ուր ցավով հայտնում է, որ Թուրքիայի հայերի դրությունը գնալով անտանելի է դառնում, սակայն կա նաեւ ուրախալի փաստ: Փոքրիկ Զեյթունի՝ ինքնավարության հասնելու փաստն իսկապես ոգեւորում է հրապարակախոսին, եւ նա Թուրքիան համարում է երկրագնդի այն վայրը, որ սեփական անձը պաշտպանված տեսնելու համար խաղաղ ու ազնիվ լինելը վախկոտության նշան է համարվում, եւ հարկավոր է զենքով հակահարված տալ, «արյունահեղ ապտակներ» հասցնել թշնամուն: Ամենակարեւորն այստեղ այն է, որ Արծրունին տեսնում է նոր սկզբունքի կյանքի կոչվելը, եւ դա հրապարակախոսը հարկ է համարում ի ցույց դնել ողջ հայությանը՝ ապացուցելու նախորդ բոլոր մեթոդների (խաղաղ աշխատանքով քաղաքակիրթ պայքար) մերժելի ու սխալ լինելը. «Ուրեմն, չնայելով տասնիններորդ լուսավորված դարի մարդասեր գաղափարներին, փոքրիկ, լեռնոտ Զեյթունը զենքով եւ արյունով շուտ կարողացավ ձեռք բերել իր ինքնավարությունը, քան թե թուրքաց Հայաստանի ամբողջ մնացած մասը իր անվերջանալի բողոքներով եւ գանգատներով» *(«Մշակ», 1879, հ. 208)*:

Ավարտելով 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի արձագանքների եւ արեւմտահայության ազատագրության խնդիրների վերաբերյալ «Մշակ» լրագրի էջերում տեղ գտած հրապարակումների եւ դրանց վերաբերյալ գլխավոր խմբագիր Գրիգոր Արծրունու դիրքորոշումների քննությունը՝ ճիշտ կլինի զենքի ուժին դիմելու հայությանն ուղղված նրա բոլոր կոչերը դիտել ոչ թե գաղափարական գծի փոփոխություն (հիշենք, որ սկզբնական շրջանում արեւմտահայության միակ փրկությունը նա համարում էր դրսի ուժի (հիմնականում Ռուսաստանի) միջամտությունը), այլ եվրոպական երկրների քաղաքականությունից հիասթափություն, որովհետեւ, ինչպես հետագա մի քանի տարիները ցույց տվեցին, նա դեռ անկեղծ հավատում էր դրսի ուժի միջամտությամբ խնդրի լուծվելուն: Իրավացի է Աշոտ Հովհաննիսյանը, երբ Արծրունու եւ Ռաֆֆու հակասության ակունքը փնտրում է հենց այս խնդրի հանդեպ դրսեւորած հակադիր դիրքորոշումների մեջ (այս մասին մանրամասն տե՛ս Բանբեր Երեւանի համալսարանի, 1968, 1 (4), **Աշոտ Հովհաննիսյան**, Արծրունու եւ Ռաֆֆու գաղափարական ներհակության ակունքը, էջ 15-31):

Մրշալույս ԳԱԼՍՏԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբոլցյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սբ Էջմիածին
Հեռախոս՝ 517197
Էլ.փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com
web կայք՝
krishayas.wordpress.com
Ստորագր. 2.6.2017 թ..
Տպաքանակը՝ 2100
Գինը՝ 50 դրամ